Արձանագրություն N 2

ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2024/31 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սևան *26.09.2024թ, ժ 15:00, ք. Սևան, Նաիրյան, 164*

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղուկասյանը
Անդամներ՝ Հ. Ղուկասյանը, Մ. Ավետիսյանը, Մ. Մկրտչյանը, Մար. Մկրտչյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2024/31 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգով հայտերի բացման, դրանցում առկա փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատման և ընտրված մասնակցի որոշման մասին

---

1. *Ընդունել ի գիտություն, որ՝*

1.1 Գնման ընթացակարգի մասին հայտարարությանը և հրավերը 19.09.2024 թ հրապարակվել է armeps.am էլեկտրոնային գնումների համակարգում և www.gnumner.am կայքում: Նիստը սկսվեց 26.09.2024թ. ժամը 15:00-ին, իսկ մեկ աշխատանքային օրով կասեցումից հետո շարունակվեց 30.09.2024թ. 10:00-ին:

1.2 Սևանի համայնքապետարանի կարիքների համար Սևան համայնքի Դդմաշեն բնակավայրի նոր բնակեցված թաղամասի գազամատակարարման խողովակաշարի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2024/31 ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն
1	***«Իգդիր Մավ» ՍՊԸ***	***Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Իսրայել Օրի, 16/1, հեռ. 093484229***
2	***«Կարոշիննախագիծ» ՍՊԸ***	***Ք. Երևան, Վաղարշ Վաղարշյանի փողոց, տուն 24/1, բն. 43, հեռ. 010278638***

2. *Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.*

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. *Տվյալներ հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.*

*- հայտերում ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն, գնի առաջարկ, համապատասխան լիցենզիաների լուսապատճենները, ինչպես նաև հրավերով սահմանված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերի լուսապատճենները: **«Իգդիր Մավ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում ներառված չեն նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների կատարումը հաստատող հանձման-ընդունման արձանագրությունները և հաշիվ-ապրանքագրերը: Հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվեց և մասնակիցը ծանուցվեց հայտում տեղ գտած անհամապատասխանությունը մինչև 27.09.2024թ. ժամը 24:00-ն ուղղելու անհրաժեշտության մասին: Անհամապատասխանությունները օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ուղղվեցին:*

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

- մասնակցների կողմից բոլոր փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան: Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված բոլոր հայտերը գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Մասնակիցների առաջարկած գները՝

ՀՀ դրամ

Սևան համայնքի Դդմաշեն բնակավայրի նոր բնակեցված թաղամասի գազամատակարարման խողովակաշարի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայություններ				
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Իգդիր Մավ» ՍՊԸ	375000	-	375000
2	«Կարոշիննախագիծ» ՍՊԸ	390000	-	390000

թվաբանական սխալներ չկան

6. Գնային առաջարկների և ոչ գնային պայմանների գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել ամենաբարձր գնահատական ստացած մասնակից **«Իգդիր Մավ» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ՝ արդյունքների ամփոփման, նիստը հրավիրել պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը ժամը 11:00, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 164, 16 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա.Ղուկասյան

Անդամներ՝ _____ Մ. Մկրտչյան

_____ Մ. Ավետիսյան

_____ Մար. Մկրտչյան

_____ Հ. Ղուկասյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան